


ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու ք/ւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ :
Չհրատարակուած գրութիւնը եւ յօդուի :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԱՊԵՐԸՆՏՈՒԹԻՒՆ

Ասկէ երկու ամիս առաջէն յայտարա-
րուած էր թէ գաղթականաց տրուած նը-
պաստը օր մը պիտի դադրէր . այս լուրը մեծ
ու պզտիկ իմացած էին , ու ոչ միայն տե-
ղական թերթեր , այլ Պոլսոյ « Բէլգանգիօն »
լրագիրն անգամ հրատարակած էր : Այս յայ-
տարարութիւնը պարզապէս նախազգ մըն էր
նպաստընկալներուն , կամաց կամաց իրենց գըլ-
խուն ճարը նայելու . բայց պիտի գտնուին
եղեր կարգ մը կնիկներ , որոնք սոյն նախ-
ազգին կարեորութիւն չի տալով , ու « Թօրոն-
գունըն հոգգը իշխու » ըսելով մինչեւ վեր-
ջը նպաստ ընդունելու ծաղրելի հաւատքը
ունենան :

Անցեալ չարթու , քննիչք՝ առած հը-
րահանգնուն համաձայն տունները պտտելով
Մայիս 19 երկուշաբթի օրէն հացի բաշխու-
մին ալ վերջ տրուելիքը իմացուցած էին , աս-
կէ զատ , որպէս զի մոռացում մը եղած չըլ-
լայ՝ Մայիս 17 շաբաթ օրը հաց տոնելու
համար հիւանդանոց գացողները զատ զատ

կանչուելով տրուած նոյն որոշումը վերջին
անգամ ալ իմացած ու տուններին վերագար-
ձած էին : (Պէտք է գիտնալ թէ՛ հացի բաշ-
խումին վերջ տրուելու որոշումը ո՛չ Օրիորդը
տուած էր և ո՛չ ալ քննիչները , ինչպէս կը
կարծեն պախասամիտը , այլ Լոնտոնի նը-
պաստամատոյց յանձնաժողովին կողմէ ղրկը-
ւած գրամին այլ ևս դադրելէն յառաջ եկած
էր) : Բւ նպաստընկալ գաղթականաց մեծա-
մասնութեանը պէս՝ փոքրամասնութիւնն ալ
յարգելու էր ակաւայ տրուած սոյն որոշու-
մը . բայց աւս՛ղ , խումը մը պարզամիտ կի-
ներ՝ իրենց առաջնորդ ունենալով խելքէ մշտ-
քէ տկար պարոն մը՝ կ'ոչոյէն երկուշաբթի
օրը յանկարծակի յարձակիլ Այն Օրիորդ
Ֆրայլըրի վրայ ու անլուր նախատանօք պա-
հանջել որ՝ կամ իրենցմէ կտրուած հացը նո-
րէն շարունակուի և կամ հիւանդներուն ու
խիստ անկարողներուն տրուածն ալ իրենցի-
նին հետ կտրուի :

Յայտնի կերպէր թէ չար նախանձը այս
ոլորմելիներուն սիրտը սկսեր էր կրծել :

Մայիս 19 երկուշաբթի օրը ժամը 9ին
վերոյիշեալ պարոնը 100է բաղկացեալ կա-
նանց բանակին դուրս անցած՝ հիւանդանոց
կ'երթայ և կը յարձակի Օրիորդին գտնուած

դունի՛ր. եթէ ուզած ատեննիս օրէնքին հաւնինք ու ուզած ատեննիս չի հաւնինք՝ լրջախոհութեան դէմ՝ գործած կըլլանք. ասկէց զատ, քահանայութիւնը աշխարհականութեան պէս ըմբռնելով՝ զայն պաշտպանած ատեննիս օձիքնիս աղաաւելու համար ողջմտութիւնը ասանկ կը պահանջէ ըսելով չանցնինք. ասանկ ընդհանուրին պատկանող խնդրոյ մը մէջ մէկ երկու անձանց համակարծիք գտնուելը ողջմտութիւն չի կոչուիր. մեծամտոնութեան (ժողովուրդին) կարծիքը առնենք, հոն է ողջմտութիւնը: Հետեւաբար, միանգամ ընդ մնշտ կը կրկնենք թէ՛ Տ. Ղեւոնդ 17 տարիներ առաջ ձեռնագրուած ատեն յատենի Եկեղեցւոյ հանդիսաւոր ուխտ մը ըրած էր զոր մինչև իր մահը պիտի յարգէր, այսօր այդ ուխտը առ ոչինչ կը համարի կոր, ըսել է որ ուխտադրութ մըն է, ու ժողովուրդն ալ ուխտադրութին չի կրնար աղէկ մարդ ըսել:

* * *

Ապսպրածի պէս՝ այս շաբթու Պոլսէն եկած Մայիս 16 թուականաւ հայերէն լրարագց մէջ կը կարդանք Կրօն. ժողովոյ Մայիս 15ի նիստին մէջ տուած մէկ որոշումը՝ ի մասին Մարաշցի Տ. Յակոբ անունով քահանայի մը՝ որ յետ մահուան իր երէց-կնոջ վերստին ամուսնացեր է թողլով քահանայութիւնը. Կրօն. ժողովը սոյն Բ. ամուսնութիւնը քահանայի մը համար ըոտ Եկեղեցական օրինաց ԾԱՆՐ ՅԱՆՑԱՆՔ նշկատելով՝ կ'որոշէ որ այսուհետեւ այդ չիք անձը չկրնար ոչ եկեղեցւոյ մէջ գալուութեան և ոչ ալ ազգային վարժարանաց մէջ պաշտօն վարել:

Քրիստոսի փոխանորդութիւնը իր անյաբցանկութեանցը զոհելով այդ սրբազան պաշտօնը ծաղրող քահանայի մը համար բարոյական մահ մըն է այս, եթե սակայն զգայ...:



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՀԱՅԵՐԻ» Ի

Վառնա 22 Մայիս 97

... Խմբագիր Տէր.

Յանուն անկողնակալութեան հաճեցէք հրատարակել հետեւեալը.

«Իրաւունք» լրագրոյ վերջին թիւերէ մէկուն մէջ՝ Կալացի թղթակիցը վստահութեամբ կը ծանուցանէր թէ՛ Ռումանական կառավարութիւնը անարգել կընդունի կորիւր երկիրը՝ ամեն ազգէ մարդիկ:

Այս լուրին ճշդութեանը վստահելով՝ մենք ալ կանոնաւոր անցագրով ընտանեօք ճամբայ ելանք, բայց գիշերուան մթութեան մէջ զմեզ շոգենաւէն դուրս նետեցին, զի նաւապետը հրաման առած էր գաղթական չի փոխադրել ի Ռումանիա. ըրած բաւական ծախսերնիս վրայ տալէ ետքը տեղերնիս վերադարձանք:

Եւ որպէս զի մեզի պէս՝ թղթակցին տուած այդ լուրէն ուրիշներ ալ չի խաբուին ու Ռումանիա երթալու համար ճամբայ չելլեն՝ պարտք համարեցինք «Հայերի» միջոցաւ ներկայս տալ ի հրատարակութիւն:

Մնամբ յարգանքօք

Յ. ԷՆՍԻՒՐԼԵԱՆ

ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆ Ի ԽԱՍԳԻՒՂ

Կ. Պոլսէ անցեալ շաբաթ օրուան թրդ-թատարով արժանահաւատ անձէ մը զրկուած նամակէն սա միայն կը տեղեկանանք թէ՛ անցեալ երկուշաբթի գիշեր Խասգիւղի մէջ խռովութիւն ծագեր է, ու հայերը ամբողջովին Մայրապետին Որբանոցը ապաստաներ են, որովհետեւ ոստիկանք Եկեղեցիին կ'ոները պաշարեր են՝ ժողովուրդը հոն մտնելէ արգիլելու համար:

Մանրամասնութիւնք յառաջիկային:

— 344 —

սենեակին գոց դուռը բանալու. դռնապանը դուռը բանալով՝ կը հրամայէ հեռանալ, որոյ ի պատասխան անյուր հայհոյանքներ լսելուն՝ ապտակ մը կիջեցնէ հայհոյիչին, որ «ոստիկան», պոռալով կը մեկնի:

Օրիորդ ֆրայդըր քաջութիւն կունենայ ամբոխին մէջ մտնելով ազդարարել թէ՛ արդէն իմացած էին այս որոշումը, հետեւաբար տեղի չի կար այս անկարգութեանց. թէ իրենց հացը կտրուելուն համար տնանկներուն ու հիւանդ տառապաղներուն ալ հացին կտրուելը պահանջելը բաժարձակապէս նախանձէ կը յառաջանար, և այս ալ խիստ այպանելի բան մըն էր: Յարձակողներէ ոմանք անոր խօսքերէն զգածեալ՝ կը խոստովանին թէ՛ զիրենք այս ապերախտութեան մղողը՝ ապտակը ուտելուն ոստիկան բերելու գացող պարոնն էր. այս միջոցին ոստիկանք ալ կը հասնին. ու երբ պարոնին կիմացնեն թէ՛ ինքն ալ պիտի ձերբակալուի, զի հաստատուած է կնիկները յարձակելու համար համողող ու հոն բերողին ինքն ըլլալը, պարոնը կըսենք՝ իբր խռովարար գլխուն գալիքը մտաբերելով՝ «Աս ՏԱՂԱՆ չունիմ», կը պոռայ ու կը կծկէ. այն ատեն կանայք կը սկսին անէծք տեղալ անոր գլխուն՝ զիրենք կէս ճամբան ձգելուն համար, ու իրենցմէ մէկքանիներ չկրնալով բարկութիւննին սանձել՝ Օրիորդին վրայ կը յարձակին. քննիչք եւ ոստիկանք կ'արգիլեն ու կը ցրուեն ամբոխը:

Փողոցին մէջ կանայք կը պոռային թէ՛ «ինչո՞ւ էրիկ մարդիկ մեր գործին կը խառնուին. նայեցէ՛ք՝ քիթը բերանը դարձուց, մեզի ոտք հանեց, հոս բերաւ, հիմա ալ առի՞ժ էղաւ ու ձգեց փախաւ»:

Վառնայի քաղաքապետը սոյն դէպքը իմանալով՝ հիւանդանոց գացեր ու ամենուն յայտարարեր է որ՝ եթէ անգամ մըն ալ այսօրինակ անկարգութիւն մը հասնէ՝ պիտի ստիպուի զիրենք անմիջապէս շոգենաւ դնելով Պոլիս ղրկելու: Իսկ խումբ մը օտարականք, որոնք եղած ազմուկէն հոն եկած ու փողոցին մէջ հաւաքուած էին՝ կըսէին. «Ի՞նչ կ'ուզեն-

Օրիորդէն, միթէ նա՞ էր Գոլսէն զիրենք հոս բերել տուողը, հայերը իրենց կեանքը ազատելու համար հոս եկան. ո՞վ խոստացաւ իրենց մինչև վերջը հաց տալու, չենք գիտեր թէ իրենց պատկանած Պատրիարքարանը մինչև հիմա 40 փարանոց մը նպաստեց. փոխ դրամ տուող մը՝ ամենեկին չի վճարող պարտեկանին անգամ՝ այս աստիճան անարգալից խօսքեր ուղղած չէ որչափ այս կիները ուղղեցին զիրենք 7 տմիսներէ ի վեր խնամող ընկերութեան մը ներկայացուցչին և անոր արբանեակներուն»:

Հատ խիստ բայց արդար էին այս խօսքերը:

Ու մենք կը կրկնենք թէ աշխարհիս մէջ ամենամեծ խայտառակութիւնը ապերախտութիւնն է:

*
*
*

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Վարձքերնին կատար յարձակող տիկիններուն. ահա ուղածնին եղաւ. հինգշաբթի օրը տեղույս Անգղիական գոնսիւլը՝ հիւանդանոց երթալով՝ վերջնապէս որոշուեր է այսօրէն սկսեալ անկարող ու հիւանդ տառապողներուն իսկ նպաստը դադրեցնել: Անշուշտ այդ խեղճերուն օրհնութիւնները պիտի աւանդեն պատճառ տուողները:

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Չորեքշաբթի օրուան «Իրաւունք», Ռուս-ճուզի Տ. Ղեւոնդ քահանային բ. անգամ ամուսնանալու ելնելը պաշտպանած էր՝ Եկեղեցական օրինագիրքը մեղադրելով թէ չի թոյլատրեր եկեղեցականաց՝ աշխարհականներու պէս բ. անգամ կարգընելու:

Քանի որ այդ մեղադրուած (°) օրէնքով ասկէց 20 տարի առաջ այդ մարդուն քահանայութիւնը ընդունած ենք՝ այսօր ալ պէտք է նոյն օրէնքով ատոր յանցաւոր ըլլալն ըն-

ԶՈՂԱՐՃԱՂԻՖ

ՀԱՐՏԱՐ ՀԵՆՐԻՔ ՄԸ

Եւրոպական Ռուսիոյ մէկ գաւառին մէջ վերջերս երեւան կելնեն ահագին բանակութեամբ գաշտային մուկեր, որք արտերը կաւրէին: Գաւառապետը կը ծանուցանէ գիւղացիներուն թէ՛ սպաննուած ամէն մէկ մուկին համար այսքան վարձատրութիւն պիտի ըստանան՝ իբր ապացոյց ներկայացնելով մուկերուն պոչերը:

Ու ահա գիւղացիք կը սկսին բաւական թուով պոչեր ներկայացնել գաւառապետին և դրամական վարձատրութիւնը ստանալ. ասոր հետ մեկտեղ՝ մուկերուն թիւը չէր պակսէր: Այն ատեն նոյն տեղի կալուածատէրերէն մէկը թակարթներ կը լարէ այդ աւերիչ անասունները բռնելու համար. բայց ո՛րչափ մեծ կըլայ իր զարմանքը՝ երբ բռնուած բոլոր մուկերն անպոչ կը գտնէ. այն ատեն կը յայտնուի գիւղացւոց խորամանկութիւնը, որոնք մուկերը կը բռնեն պոչերէն կը կտրեն ու գաւառապետին ներկայացնելով որոշեալ վարձքը կը սանտն եղեր, իսկ անպոչ մուկերը նորէն կը ձգէին գաշտին մէջ որպէս զի բաղմանն ու ասանկով եկամտի մշտակայ աղբիւր մը ունենան յօճիւր և ծխախոտ վաճառելու համար:

Արտեն թէ՛ գաւառապետը հրամայած է որ ասկէ ետքը ոչ թէ մուկերուն պոչերը՝ այլ գլուխները ներկայացուին իրեն:

ՀԻՄԱՆԻՈՒՆ ՍՊԱՍՈՒՀԻՆԵՐԸ

Բարիզեան լրագրի մը մէջ կը կարդանք.

Ֆ... տիկինը լրագրաց միջոցաւ ծանուցում մը ընելով՝ սպասուհի մը կ'ուզէ: Հետեւեալ օրը սպասուհի մը կը ներկայանայ: Տիկինը կը հարցնէ.

— Լաթ լուալ գիտե՞ս.

— Մինչև հիմա աշխատած տուններս լուացքը դուրսը ընել կուտային:

— Այլեւ գիտե՞ս.

— Այդ գործը տիկինս կը կատարէր յատուկ գործիքով մը:

— Խմորեղէն եփել գիտե՞ս.

— Մենք խմորեղէնները գուրսը պատրաստել կուտայինք:

— Կերակուր եփել գիտե՞ս.

— Դուք ճաշարանը չէ՞ք ճաշեր:

— Ուրիմն անշուշտ գիտէք խոհանոցի սպասները լուալ:

— Ոչ տիկին, եթէ այս տեսակ գործերու համար պիտի գործածէք զիս, լաւագոյն է գնչու մը կանչէք:

— Բայց ըսէ տեսնեմ, հապա ի՞նչ գիտես:

— Կը դարմանամ որ չէք գիտեր. ըսպասուհիի պաշտօնն է պարունը հագուեցնել ու հանուեցնել, անոր գինիին ու ծխախոտին հոգ տանիլ և այլն և այլն:

Տիկին ֆ... դեռ կը շարունակէ իր ծանուցումը լրագրաց մէջ:

ԵՐԿՈՒ ՄՈՒՐԸՑԻՆԵՐ

Բարիզի ցէն գետին կամուրջին վրայ երկու կոյր մուրացիկներ կը խօսէին այսպէս.

— Իմացա՞ր, իսկ մը շինծու ֆրանքներ երեւան ելեր է կըսեն կոր, արգեօք իրա՞ն է, քեզի ալ հանդիպեցա՞ն:

— Սատանային ականջը խուլ՝ մինչև հիմա ատանկ բանի չի հանդիպեցայ, թէև որբուած ֆրանքներ շատ առի:

— Ի՛նչ, սրբուած ֆրանք մի՞.

— Այո՛:

— Մե՛ղք քեզի, կէօզ կէօրե սրբուած ֆրանքն սլ կառնուի՞ մի եւ, մէյ մը մատի սանկ վրան քսես նէ՛ յայտնի կըլլայ:

— Աղէկ կըսես ամա՛ 20 սանդիմ պաւ կաս տան նէ՛ ամենեւին յայտնի չըլլար կոր:

ՊԱՐՏԱՍԵՐ ՄԸ

Նպարավաճառ մը իր յաճախորդներէն մէկուն դուռը կը վարնէ. յաճախորդը գլուխը պատուհանէն դուրս հանելով պարտապահանքը տեսնելուն պէս՝ ներս կը քաշուի ու կը հրամայէ տղուն երթալ մարդը ճամբել:

— Ի՞նչ կ'ուզէք:

— Հայրիկդ:

— Հոս չէ:

— Ո՞ր գնաց:

— Ո՞վ գիտէ ո՞ւր գացած է:

— Հատ աղէկ, ըսէ հայրիկդ որ ուզած տեղը թող երթայ, բայց գլուխը պատուհանին առջեւ չի մոռնայ:

ԺԱՄԱՍԵՐ ԵՐԿՈՒ ՕՐԻՈՐԿՆԵՐ

(Եկեղեցիին մէջ)

Հայր մեր որ յերկինս սուրբ եղիցի աշուն քո. ինծի նայէ, նոր ֆիստանդ շինեցիր, լմնցա՛ւ:

— Մօտիսթրան տահա չի բերաւ:

— Եկեցցէ արքայութիւն քո. դա կէն՝ ձին շաբխան ի՞նչ աղւոր է:

— Քրոջս առածն ալ անանկ է:

— Որպէս յերկինս և յերկրի, ա՞ն ալ ասանկ մեծ թիւյով է:

— Հապա՞:

— Ձհաց մեղ հանապա. մերինը թիւյսիդ պիտի Ըլլայ:

— Իրա՞ւ:

— Զօրդ տուր մեզ այսօր. կռօն քօրտէլայով պիտի կապիլ տանք:

— Ըն հիմա պարիթ է կըսեն կոր. որպէս եւ մեք թողունք մերոց պարտապանաց:

— Ո՞վ ըսաւ:

— Մօտիսթ Մարտեան ըսաւ. եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն:

— Փրկեա զմեզ ի չարէ. մաղերս ալ

բէքշատ Ըլլալուն՝ չեմ կրնար կոր ուղածիս պէս շտկել:

— Զի քո է արքայութիւն. իմ մաղերս խարէր են:

— Յաւատեանս յաւիտենից ամէն. իմ մաղերուս ալ ամենքը վարնուած են:

ՏԻՎԻՆ ՄԸ

Տիկին մը իր հիւանդ ամուսնոյն կ'ըսէր.

— Սիրե՛իս, քահանային այցելութենէն քո՛հ չեղար՞:

— Ոչ, պաշտելի կինս, ոչ, ընդհակառակը վիշտ պատճառեց ինծի:

— Ո՛հ, սիրելի ամուսինս, ատանկ մի՛ ըսեր. մարդ ենք, պիտի մեռնինք. լաւ է որ հնազանդինք այն սրբակրօն պաշտօնէից խորհուրդներուն, որոնք միշտ մեր օգտին համար կ'աշխատին:

(Լալով) — Բայց տիկին, գիտե՞ս ի՞նչ խրատ տուաւ քահանայն.

— Ո՛չ:

— Երբեմն աղաչեց ու երբեմն ալ հրամայական ձեւով ըսաւ թէ՛ անշարժ կալուածներուս մէկ մասը եկեղեցիին նուիրելու եմ, եթէ հոգիս փրկութեանը փափագող մէկն եմ:

— Վա՛յ սարսափելի մարդ, եթէ անգամ մըն ալ տունս ոտք կոխէ՝ մորուքը պիտի փեթտեմ. պառկէ՛ սիրելիս, պառկէ՛, սիրտդ թունդ մի՛ հաներ...:

Զուարճախօս մարդ մը տղան ամուսնացնելէ քանի ամիս ետքը՝ առած հարսին ունեցած բնաւորութիւնը հարցնողներուն կը պատասխանէր սապէս.

«Էվէօղան կէլտի,

Տիրլիկի պօղան կէլտի.

Եաստըգ ֆըսըլթըսը,

Թիւքէնմէզ. պաշ աղըսըդ»:

ԹԱՊԼԱՔԵԱՐ ԴԱՆԻԿ ԱՂԲՕՐ
ՃԻՒՄՊԻՒՇԸ

Անցեալ օր տիկին վառվառ՝ իր աղջկան օրիորդ Բուրմինէի հետ Մուսալլաէն անցած առենին՝ դիմաւորեցին իրենց վաղեմի ճանչ-ւորներէն թապալաբար Դանիկ աղբարը՝ որ հոս ալ եկեր՝ հացագործի մը քով՝ եշով թապալաբարութիւն կրնէր :

— Վա՛յ Դանիկ աղբար, արամա իլէ պօւլունմազ, հո՞ս էս եղեր :

— Բամմանք է էֆէնտըմ :

— Ամա հեռուէն տեսայ նէ՛ աշկըս խածաւ :

(Ինքնիրեն) — Աշկունքդ ուտիմ :

— Ի՛նչտար վախիթ է քի հոս էս :

— Էֆէնտըմ, օխտը ամիսը միւթէ-ճապիւզ կանէ :

— Մենք ալ վեցը պիտի լմնցունենք՝ օխտը մանանք :

— Անճախ, հըմայէկս մոռնատտէմը ըլ-լալով ձեզ ֆէօս տեսնելուս սէպէպով հիոսը-րած մէմնունիյէթս չի տի կրնամ պէյան ա-նել մոռնատտէմ :

— Ք՛աղջիկ, որի՞ համար մոռնատտէմ էս կըսէ կոր :

— Մէկուն համար չըսաւ :

— Էս կիտցայ քի քովի Հոռոփի հանը-մենց համար ըսիր տէ՛ . . :

— Խալիւ Էֆէնտըմ, ծառայականս ադ թօռթօք հանըմը չիմ ճանչնար :

— Մենք ալ նէ կերթանք նէ կուգանք :

— Եղէկ :

— Էյ, խըյանէթ, օր մը մեզի չպիտի՞ հրամմես :

— Գըլիւուս վրայ էֆէնտըմ, տն է ուր րամմանքնիդ տալէթ մի կանէք, ատ տալէ-թին էճանիպէթ չընել կըլլա՞յ մի ես :

(Կամաց մը, աղջիկանը) — Օլտու օլա-

լը էս ալ աս մարդուն լախըրտները չիմ հաս-նար : Ճանիկը մանիկը մէկ կընէ կոր :

— Իրեք լախըրտըն մէկը հասկնաս նէ կ'օգտէ :

— Դանիկ աղբար, առաջուան պէս մեզի ալ հաց կը պերես :

— Մա էլ մէմնունիյէ . անճախ, րամ-մանքնիդ վո՞ւր կու նստիք :

— Եէլ տէյիրմէնին :

— Էֆէնտըմ ադ եէլ տէկիրմէնին մեր սինօրը չէ, պախուսուս՝ օրը իրեք օխա հացի հըմար ֆէօն էրթալ գնալէն մարդուս ֆօքին ալ կու քայվի ճիկէրն ալ :

— Էյ հեռու ենք տէյի մեզի չի՞ պի-տի գաս :

— Իսթաֆուլլա, մայմուռ հանըմ, ան-գամ մի ուր իրար գտանք՝ մինպահաթ տի գամ :

— Միտքդ կուգա՞յ, չըրբըճը չայիրին զիյաֆէթ մը Բրինք :

— Պէլի, տօգսան պէշ թարիխուն :

— Ան պաները հոն մնացին :

— Էֆէնտըմ մենք ֆէօս չե՞նք մի ես. ուզինքնը՝ ֆէօս ալ Մադատտ աղա չէշմէսին ճիւմպիւշ մի կանինք :

— Հա, հա, ընենք, ամա հոս շատ մը կերակուրներով էրթալ չըլլար :

— Ինչո՞ւ :

— Քէսէտար էֆինտին չի թողուր :

— Ադ հէրիֆնո՞վ է. բերնի՞ն է մոռ-նացեր ուր չի տի թողու :

— Չի հասկցար :

— Լայըզու ճիւմպիւշ մի տի անինք :

— Բէք աղէկ :

— Քա մայրիկ, վարի քովերնուս Սիմա հանմենք ալ հետ առնենք :

— Կըլլայ. տեսնաս Դանիկ աղբար, ինչ շարգատա կենճ մըն է :

— Էֆէնտըմ, ծառայականս ալ շագա չենլիքը բէք կու սիրիմ :

— Էրկու աղջիկ իլէն տալ մը ունի, թող հետը բերէ :

— Եֆէնտըմ, Էրիյ մարդ չըլլայ տէ
հետերնիս՝ իշտար կնիյ մարդ գայ իսէ՝ պէ-
յիս մի չի կայ. Էրիյ մարդիկ մէսէլէ կու հա-
նին.

— Շիտակ է. մենք մեղի մաֆիճէ էյ-
լէնմիշ կըլլանք:

— Պա խուսուս հէլպէթտէ գալիքնե-
րուն մէջ եանուխ մախամլու կանչողներ կը
գննուին:

— Ք'աղջիկ, ետներն պոխալը ո՞վ է.

— Չիյտեմ իրաւոր:

— Արթըն կ'ուզես եանըդ պագալէն
առ պէտք ըլլալիքները կուզես հետդ բեր
էփելը մեզմէ է:

— Շատ աղէկ էֆէնտըմ,

— Էյ ե՞ր պիտի երթանք.

— Գուք գիտէք:

— Գալ հինգշաբթի երթանք, հէմ
էրկնային վժկին օրն է, վիճակ ալ կը հա-
նենք:

— Բարով կուլի:

— Շիմսիլիք մնաս բարով:

— Բարի եկար էֆէնտըմ, հազար բարի:

(Շորու նակելի)

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 5

Քանի որ ջանաս դու նայիլ իրեն՝
Ամթով փախչի նաքեզմէ արդէն.
Երբոր հայելին գէմըդ ունենաս՝
Այն ատեն զայն տեսնել կարենաս:

Թիւ 6

Մուրացկանը մեծ փութով
Իր վրայէն կը նետէ,
Իսկ հարուստը խնամով՝
Գրպանը զնէ կը պահէ:

— 0 —

Թիւ 4 հանելուկը որ գգմած (մաքառնա)

կը նշանակէր՝ առաջին լուծողը եղաւ Տիար
Յ. Գ:



ԸՆՏԱՆԵԿԱՆ

Պ. Փ. Քիթիբիոսեան՝ կնոջը անհամբոյր
ընթացքին համար տաներէցին կը գանգատի.
տաներէցն ալ ըստ իւր պտրտականութեան՝
կինը յուղղութիւն հրաւիրելու համար անոր
տունը կ'երթայ: Տիկինն ալ գործը սապէս կը
բացատրէ.

— Տէր հայր, ամուսինս իմ բնաւո-
րութենէս գանգատելու վրայ է. այս գանգա-
տը անիրաւ է, վասնզի իր բարեկամները իմ
բնաւորութենէս շատ գոհ են, միթէ այս գո-
հունակութիւնը իմ անմեղութիւնս չի՞ հաս-
տատեր.

Տաներէցն — Ո՛չ, տիկին, ո՛չ, բուն
գանգատին շարժառիթն ալ այդ բարեկամ
կոչուածներուն ձեզմէ գոհ մնալին է եւ...:

Պ. ԿԱՌՈՍ ՈՒ ԻՐ ԿԻՆԸ

Պարոն Կակոսին կինը կարգուելէն ե-
րէք ամիս ետքը զաւակ մը կը ծնի.

— Ասի՞նչ է, կրսէ Պ. Կակոս, մերին
գիտցածը՝ տղան Ծ ամիսէն պիտի ծնի, աս
ի՞նչ չաբուխ բերիր դուն:

— Ա՜յ կնոս Կակոս աղա, կը պա-
տասխանէ տիկին Կակոս, ես չաբուխ չի բե-
րի՝ դուն հետս ուշ կարգուեցար:



ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Ահա այ մարերու ամենաաժան և անթնաս
դեղ մը

Հացին բարակ շերտերը կտակարայի վը-
րայ լաւ մը խորովելու (ջրթըռ) ընելու է .
յետոյ վայն բարակ փոշի ընելով՝ քիչ մը աղ
խառնելու է : Այս խառնուրդով տկոտները
լաւ մը շփելէ ետքը՝ բերանը ջուրով լուալու է :

— 0 —

Ձեռքի վրայի ելունդը (կոծիծ) անհետացնել :

Ձեռքին ելունդը ջնջելու համար պէտք
է իրիկունը պառկելէ առաջ ձեռքերը փոշի
եղած կաւիճով շփել ու ձեռնոց դնել՝ որ-
պէս դի կաւիճը ելունդին վրայ մնայ : Չորս
հինգ իրիկուն այս գործողութիւնը պէտք է
կրկնել, ապա հով ըլլալով որ անպատճառ
այդ տգեղ կոծիծները պիտի անհետանան :

ԱԶԴ

Այցետուն, հասցէտուն. նամակա-
գլուխ, հրաւիրատուն, բարենիչ, տոմ-
սակ, եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տը-
պագրուին : Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին :
Գին գահացուցիչ : Դիմել Հայկիի խըմ-
բագրութեան :

ԳԱՐԵԳԻՆ ՏԱՆԱՊԱՇԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Ղերձակ

Սեծ փողոց Բրէսլավսքա, թիւ 3 Վառնա

Վայելուչ ձեւ և ընտիր կերպասեղէնք :
Ներկայ ամրան եղանակին յատուկ բաւա-

կան ապրանք բերել տրուած է : Չափաւոր
գին : Առիթէն օգտուեցէք :



Գնումն ևւ վաճառումն հին ու նոր ամէն
տեսակ նամակագրոշմերու (բուլ), դիմել Հա-
յկիի խմբագրութեան :

ՄԵՔԵՆԱՅԻՅ ԳՈՐԾԱՐԱՆ

(ՊԱՅԼԱՆԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ Ե Բ. Է. ԲԱՆՉՈՒՓ

Վառնա Ծրդ Թաղ ԵՐԵՐԵՂ Թապիս

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շո-
գեմակոյէներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթեայ գործիքներ, զրամական
գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ եայլն եւ այլն
կը պատրաստուին : Պատ. Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործատանի շինու-
թիւններէն :

ԳՈՐԾԱԿԱՆԱԹԻՒՆՔ

Ռուսձուգ	Տիարք Եղաւթ Սարաֆեան :
Սիլիսդրէ	Տիար Արթաքի Սարգսեան :
Հսւմլա	Յովհաննէս Մաճարեան :
Սօֆիա	Յակոբ Ծերունեան :
Լոնտոն	Հայկ Աստուածատուր :

Оговоренъ-редакторъ : Н. Драгулевъ

Печатница „Взаимость“ — Варна.